

Իւրաքանչիւր սկիզբ շարունակութիւնն է անցեալի, այդպէս է նաեւ սերունդներու երթը: Աւագը միշտ կը մնայ օրինակելի եւ յիշարժան, այդ իսկ պատճառով Ամանօրեայ կարեւոր այցելութիւն է Leisure World-ի երէցներու տան այցելութիւնը: Ե՛լ հոգեպարար ե՛լ յուզիջ հանդիպումը, որը սկսաւ Տէր Չարեհ Աւագ Քահանայ Չարգարեանի Ս. Ծննդեան տօներու հոգեւոր արարողութեամբ: Արագին ջութակի կատարումը, եկեղեցական երգերը, ուրախութեան եւ գոհունակութեան ժպիտ յառաջացուց մեր հրաշալի եւ կեանքի փորձառութիւնը կուտակած պապիկ-մամիկներու դէմքին: Առիթ ստեղծեց նաեւ լսելու Պրն. Սարգիս Քիլիսեանի հարմոնիկայի կատարումը: Վարժարանիս աշակերտները հպարտութեամբ ներկայացուցին իրենց պատրաստած յայտագիրը. իսկ Օրդ. Անահիտը երէցներու կողմէ օրհնաբեր խօսք ուղղեց աշակերտներուն, յիշեցնելով որ միշտ ձգտին դէպի վեհն ու բարին:

Յաջորդ տօնական այցելութիւնը տեղի ունեցաւ Յունուար 10-ին Seniors Health Centre- ին մէջ: